ՇՈՂԻԿ ՄԵՋԼՈՒՄՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Համաշխարհային տնտեսության համար միջազգային զբոսաշրջության կարևորությունը պայմանավորված է համաշխարհային ՀՆԱ-ում զբոսաշրջային ծառայությունների ընդհանուր և ուղղակի մասնաբաժնի բավական մեծ տեսակարար կշռով: Առհասարակ, զբոսաշրջությունը կարելի է դիտարկել որպես միջազգային առևտրային ծառայությունների ամենաարդյունավետ դրսևորումներից մեկը՝ ֆինանսական և բանկային ծառայությունների հետ միասին: Այն տնտեսական ու սոցիալական կարևոր շարժիչ ուժ է, որը ստեղծում է ներդրումներ, զբաղվածություն և եկամուտ՝ միաժամանակ զարգացնելով երկրի ենթակառուցվածքներն ու խթանելով ազգային արժեքների պահպանումը: Սույն հոդվածի հիմնական նպատակն է դիտարկել, թե ինչպես է զբոսաշրջային ոլորտը ազդում համաշխարհային տնտեսության զարգացման ընդհանուր միտումների վրա: Հեղինակի կողմից գնահատվել են միջազգային զբոսաշրջային եկամուտների ու համաշխարհային տնտեսական աճի միջև առկա փոխկապվածությունները:

Մի շարք հետազոտություններ ապացուցում են զբոսաշրջության ոլորտի կարևոր սոցիալ-տնտեսական նշանակությունն առանձին երկրի տնտեսական աճի, եկամուտների ավելացման և ընդհանուր մրցունակության բարելավման տեսանկյունից: Այս համատեքստում, Հայաստանի համար առանցքային է տնտեսաչափական վերլուծությամբ գնահատելն ու հասկանալը, թե ինչպես է զբոսաշրջության ոլորտն անդրադառնում երկրի միջին ամսական անվանական աշխատավարձի վրա:

Հիմնաբառեր. *միջազգային զբոսաշրջություն, համաշխարհային տնտեսություն, կոռելյացիոն վերլուծություն, ռեգրեսիոն վերլուծություն, տնտեսաչա-*

փական վերլուծություն, զբոսաշրջային գործակալությունների գործունեություն, միջին ամսական անվանական աշխատավարձ

JEL: L83, C20

Ներածություն: Ժամանակակից աշխարհում զբոսաշրջությունը համընդհանրական երևույթ է, ինչպես նաև միջազգային տնտեսական հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից մեկը: Ընդ որում, միջազգային զբոսաշրջությունն ուղղակի և անուղղակի ներազդում է ինչպես առանձին երկրների, այնպես էլ տարածաշրջանների ու ընդհանուր համաշխարհային տնտեսության իրավիճակի վրա: Միջազգային տնտեսական հարաբերությունների դրսևորման տարատեսակ ձևերի զարգացմանը զուգահեռ, միջազգային զբոսաշրջությունը վերածվել է ազգային ու համաշխարհային տնտեսության ճյուղերի առաջատար ոլորտի: Այն նախևառաջ ազգային հարստության ավելացման և բնակչության կյանքի որակի բարելավման միջոց է, ինչպես նաև տնտեսության արդյունավետ ոլորտներից մեկը, քանի որ հսկայական դեր ունի երկրում զբաղվածության ապահովման, նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Տնտեսության ոչ մի ճյուղ զբաղվածության ոլորտը կարգավորող նման ազդեցություն չունի: Երկրում զբոսաշրջության ոլորտի բարեհաջող զարգացումը նշանակալի ազդեցություն է ունենում ոչ միայն առանձին շրջանների, այլև ամբողջ տարածքի վրա:

Զբոսաշրջությունը ցանկացած երկրի համար բնակչության բարեկեցության մակարդակի բարելավման կարևորագույն պայման է, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու եկամուտների արդյունավետ վերաբաշխում, տարածքային համաչափ զարգացում, ակտիվացնում է ինչպես ներդրումային, այնպես էլ ընդհանուր գործարար միջավայրը՝ տարբեր տարիքային խմբերին ապահովելով համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերով:

Գրականության ակնարկ: Ընդհանուր առմամբ, զբոսաշրջությունը երեք հիմնական ազդեցություն ունի ժամանման երկրի վրա՝ տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական[1]: Տնտեսական առումով ժամանման երկրի վրա հատկանշական ազդեցություն է բյուջետային եկամուտների աճը, արտադրության ընդլայնումը, ներդրումների խթանումը, ենթակառուցվածքների ու ընդհանուր տնտեսության զարգացումը: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ դրական կոռելյացիա կա զբոսաշրջային եկամուտների և երկրի տնտեսական աճի միջև[2]: Լիսաբոնի համալսարանի Տնտեսագիտու-

---

[1] Տե՛ս **Cooper C., Fletcher J., Fyall A., Gilbert D., Wanhill S.**, Tourism Principles and Practice: (4th Edition). Harlow: Financial Times Prentice Hall, 2008:

[2] Տե՛ս **Ahiawodzi A. K.**, Tourism Earnings and Economic Growth in Ghana, British Journal of Economics, Finance and Management Sciences, Vol. 7 (2), 2013, էջ 187-203, **Anson K. J., Thaliath A.,** A Study on Changes in GDP due to its Relative Dependence on Tourism Receipts, Atna, J Tour Stud, 11, 1, 2016, էջ 17- 30, **Eugenio-Martin J. L., Martin Morales N., Scarpa R.,** Tourism and economic growth in Latin American countries: A panel data approach, Social Science Research Network Electronic Paper. No. 26, 2004, http://www.feem.it/userfiles/attach/Publication/NDL2004/NDL2004-026.pdf, **Kreishan F. M.M.,** Tourism and economic growth: The case of Jordan, European Journal of Social Sciences, 15 (2), 2010, էջ 229–234, **Skerritt D., Huybers T.,** The effect of international tourism: An empirical analysis, Asia Pacific of Tourism Research, Vol.10, Issue 1, 2005, էջ 23-43:

թյան և կառավարման դպրոցի ներկայացուցիչներ *Ֆելիպա Դե Մելլո-Սամպայոյի* և *Սոֆյա Վալլեի* «Տուրիզմը և աճը եվրոպական երկրներում» հետազոտությունում ուսումնասիրվել են զբոսաշրջային եկամուտների, ՀՆԱ-ի և առևտրի ծավալի միջև փոխկապվածությունները՝ ցույց տալով, որ զբոսաշրջության զարգացումն ուղղակի ազդեցություն ունի առանձին վերցրած երկրի տնտեսական աճի վրա, իսկ մեկ զբոսաշրջիկի հաշվով ծախսերի ավելացումը կարելի է զբոսաշրջային ծառայությունների գնահատման որակական ցուցանիշ համարել[3]:

Տնտեսության վրա դրական ազդեցության շնորհիվ է, որ այս ոլորտը շահադրդում է երկրների կառավարություններին, կազմակերպություններին և անհատներին ընդգրկվելու զբոսաշրջության արդյունաբերության մեջ: Հյուրանոցները, հյուրատները, հոսթելները, զբոսաշրջային գրավչության վայրերը շահառուների համար ապահովում են եկամուտ, ինչպես նաև բազմաթիվ աշխատատեղեր ստեղծում համայնքներում:

Սուրրեյի համալսարանի պրոֆեսոր *Լեո Ջագոն*, ով երկար տարիներ ղեկավարել է Զբոսաշրջության կառավարման դպրոցի զբոսաշրջության ֆակուլտետը[4] և Միչիգանի համալսարանի պրոֆեսոր *Դանիել Ջ. Սփեյսը* իրենց մի շարք վերլուծություններում ներկայացնում են[5,6] տնտեսության վրա զբոսաշրջության ու ճանապարհորդության դրական ազդեցության հետևյալ կարողությունները՝

- ազգային եկամուտների և արտարժույթի քանակի աճ,
- տնտեսական բազմարկչային էֆեկտ,
- զբաղվածության բարձրացում,
- ենթակառուցվածքների բարելավում:

Բացի զբոսաշրջության ոլորտում ստեղծվող ուղղակի աշխատատեղերից, այն նաև անուղղակի աշխատատեղերի ստեղծման կարևոր գործիք է, որը զբաղվածության մակարդակն ավելացնում է շինարարության մեջ, բանկային ոլորտում, տրանսպորտային ընկերություններում և այլն:

Հետազոտության մեթոդաբանություն: Վերլուծությունների համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայազգի և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, Համաշխարհային բանկի, Զբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Զբոսաշրջության պետական կոմիտեի տվյալները:

Համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների, ինչպես նաև ՀՀ-ում զբոսաշրջային գործակալությունների գործունեության և միջին ամսական անվանական աշխատավարձի միջև առկա կոռելյացիոն

---

[3] Տե՛ս **De Mello-Sampayo F., De Sousa-Vale S.,** Tourism and Growth in European Countries: An Application of Likelihood-Based Panel Cointegration, Working Papers 17, 2012, էջ 3:

[4] https://www.surrey.ac.uk/people/leo-jago

[5] Տե՛ս **Jago L.,** The Value of Business Events, 2012, www.businesseventssydney.com.au:

[6] Տե՛ս **Stynes D. J.,** Economic Impacts of Tourism: A Handbook for Tourism Professionals, Illinois Bureau of Tourism, Illinois Department of Commerce and Community Affairs, Prepared by the Tourism Research Laboratory at the University of Illinois at Urbana-Champaign, 1997, էջ 4:

կապերի բացահայտման համար իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն՝ փոքրագույն քառակուսիների եղանակով (Eviews 10 SV ծրագրային փաթեթի կիրառմամբ): Ռեգրեսիոն վերլուծության գլխավոր խնդիրը փոփոխականների փոխկապվածությունը բնութագրող մոդելի կառուցումն է: Դրա կիրառմամբ հնարավոր է դառնում անկախ փոփոխականի արժեքներով ստանալ կախյալ փոփոխականի արժեքների գնահատականները:

Մոդելի կառուցմանը մասնակցում է փոփոխականների երկու տարատեսակ՝[7]

1. *արդյունքային (կախյալ, ներծին) փոփոխական (Y)*. դրա արժեքները ձևավորվում են այլ փոփոխականների և գործոնների ազդեցությամբ, որոնց մի մասը ենթարկվում է գրանցման, կառավարման և պլանավորման: Ռեգրեսիոն վերլուծությունում արդյունքային փոփոխականը ֆունկցիայի դեր է կատարում, որի արժեքը որոշվում է փաստարկների դեր կատարող, բացատրող փոփոխականների արժեքներով,
2. *բացատրող (անկախ, արտածին) փոփոխական (X)*. դա գրանցման ենթարկվող փոփոխական է, որը նկարագրում է իրական տնտեսական համակարգի գործարկման պայմանները: Ռեգրեսիոն վերլուծության մեջ անկախ փոփոխականները հանդես են գալիս որպես Y արդյունքային ֆունկցիայի փաստարկներ: Դրանք իրենց բնույթով կարող են լինել ինչպես պատահական, այնպես էլ ոչ պատահական:

Հոդվածում տեղ գտած տնտեսաչափական հաշվետվությունները ցույց են տալիս, որ տնտեսաչափական թեստերի ցուցանիշներն էապես ընդունելի են, իսկ դետերմինացիայի գործակիցը բավական ուժեղ է: Կիրառվել են նաև գրաֆիկական, իրավիճակային և համակարգային վերլուծություններ՝ ուսումնասիրելով այլ գործոնների ազդեցությունը դիտարկվող փոփոխականների վրա:

Իրականացնելով համանման վիճակագրական վերլուծություններ՝ հնարավոր է դառնում բացահայտել մի շարք տնտեսական գործոնների այնպիսի փոխկապվածություն, որը հնարավորություն կտա ընտրելու ճիշտ թիրախներ և իրականացնելու նպատակաուղղված տնտեսական քաղաքականություն:

Վերլուծություն: Միջազգային զբոսաշրջությունն ընդգրկում է և՝ շուկայական տնտեսության ուղղությունները, և՝ հասարակության սոցիալական զարգացման հնարավորությունները: Ընդ որում, սոցիալական ուղղությունները զբոսաշրջության համար ծառայում են որպես նպատակ, իսկ շուկայականը՝ այդ նպատակի իրականացման միջոց[8]: Զբոսաշրջության «սոցիալականության» մասին է փաստում նաև այն, որ 1950 թ. հանգստանալու նպատակով արտերկիր է մեկնել ընդամենը 25 մլն մարդ, իսկ 2018 թ. զբոսաշրջիկների թիվը հասել է 1.4 միլիարդի[9]:

---

[7] Տե՛ս **Ա. Քթոյան, Ս. Խաչիկյան, Մ. Մովսիսյան, Կ. Հակոբյան**, Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փաթեթի գործադրմամբ, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ, 2015, էջ 5-6, https://asue.am/upload/files/structure/SPSS_methodical_PDF.pdf:

[8] Տե՛ս **Коковский Г. И.**, Обеспечение конкурентоспособности туриндустрии России на международном рынке туристских услуг, Санкт-Петербург, 2010, էջ 3:

[9] Տե՛ս International Tourism highlights, UNWTO, 2019 edition, էջ 2, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152:

Չնայած, ընդհանուր առմամբ, տնտեսության վրա զբոսաշրջության դրական ազդեցություններին՝ այն նաև որոշակի բացասական երանգներ ունի, օրինակ՝ արտահոսքը, ավանդական զբաղվածությունից շեղումները, սեզոնային գործազրկությունը, ինչպես նաև կեցության ծախսերի աճը: Արտահոսքի պարագայում փողը նպատակակետ երկրից դուրս է գալիս: Սրա պատճառներից մեկն այն է, որ, օրինակ, արտասահմանյան կապիտալ տնօրինող հյուրանոցները ստացված եկամուտները դուրս են հանում տեղական տարածքից, կամ ավելի խոշոր զբոսաշրջային և ճանապարհորդական ընկերությունները նախատեսվող ապրանքներն ու ծառայությունները գնում են կենտրոնացված, որպեսզի դրանք ձեռք բերեն լավագույն գնով[10]:

Զբոսաշրջությունն, ըստ էության, հանգեցնում է ավանդական աշխատատեղերի կորստին, երբ հատկապես զարգացող երկրներում աշխատողները գյուղատնտեսության, արդյունաբերության, հանքարդյունաբերության, ձկնորսության, անտառտնտեսության ոլորտներից աստիճանաբար տեղափոխվում են դեպի զբոսաշրջային ծառայությունների ոլորտ: Իսկ սեզոնային գործազրկությունը կարող է իրական խնդիր դառնալ զբոսաշրջային նպատակակետ երկրների համար, որոնք չեն կարող ծառայություններ տրամադրել տարվա բոլոր եղանակներին: Սա կարող է հանգեցնել նրան, որ երկրի որոշակի տարածքներում տեղական բնակչությունը հարկադրված լինի ավելի բարձր գին վճարել սննդի, զվարճանքների, տրանսպորտի և այլ կենցաղային ծախսերի համար: Բայցևայնպես, բազմաթիվ հետազոտություններ կենտրոնացել են զբոսաշրջային ոլորտի աճի շնորհիվ երկրների տնտեսական օգուտների վրա, ինչի արդյունքում զբոսաշրջության ոլորտի պետական աջակցությունը երկրների կառավարությունների կողմից աստիճանաբար ավելանում է[11]:

Զբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի տվյալների հիման վրա հնարավոր է գնահատել զբոսաշրջության և ճանապարհորդության ինչպես ուղղակի, այնպես էլ ընդհանուր ներդրումը համաշխարհային տնտեսության մեջ: Համաձայն գծապատկեր 1-ի տվյալների՝ 2006-2018 թթ. ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր և ուղղակի ներդրումների տարեկան աճի միջին տեմպերը կազմել են համապատասխանաբար 3.3% և 3.2%:

Ընդ որում, 2006 թ. համեմատ, 2018-ին համաշխարհային տնտեսության մեջ զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր ներդրումն ավելացել է 46.1%-ով՝ կազմելով՝ 8.81 տրլն ԱՄՆ դոլար, իսկ զբոսաշրջության և ճանապարհորդության ուղղակի ներդրումները համաշխարհային տնտեսության մեջ, 2006 թ. համեմատ, 2018-ին ավելացել են 44%-ով՝ կազմելով՝ 2.75 տրլն ԱՄՆ դոլար:

---

[10] Տե՛ս **Cooper C., Fletcher J., Fyall A., Gilbert D., Wanhill S.,** Tourism Principles and Practice: (4th Edition). Harlow: Financial Times Prentice Hall, 2008, էջ 87:

[11] Տե՛ս **Kumar J., Hussain K.**, A Review of Assessing the Economic Impact of Business Tourism: Issues and Approaches. International Journal of Hospitality and Tourism Systems, 7(2), 2014, էջ 49-55, ISSN: 0947-6250 Print:



Գծապատկեր 1. ***Զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր և ուղղակի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում, 2006-2018 թթ., տրլն ԱՄՆ դոլար, %***[12]

Զբոսաշրջային մի շարք ցուցանիշների միջև առկա կոռելյացիոն կապերի բացահայտումը կարևոր նշանակություն ունի զբոսաշրջության զարգացումների արձանագրման և կանխատեսումների համար, ինչը երկրների զբոսաշրջային հիմնական ռազմավարությունների և պետական քաղաքականությունների հիմք է: Այս համատեքստում, կարևոր է հասկանալ ու գնահատել, թե ինչպիսի փոխկապվածություններ կան միջազգային զբոսաշրջային ժամանումների ու համաշխարհային տնտեսության մեջ զբոսաշրջության և ճանապարհորդության ոլորտում ընդհանուր ներդրումների, ինչպես նաև միջազգային զբոսաշրջային եկամուտների և համաշխարհային տնտեսական աճի միջև: Ընդ որում, տնտեսաչափական մոդելները կառուցվել են՝ հաշվի առնելով երկու հնարավոր վարկածների (հիպոթեզ) առկայությունը: Զրոյական վարկածի դեպքում ցուցանիշների երկու խմբում չկա կոռելյացիոն կապվածություն, դրանք անկախ են, և համեմատվող արժեքները չեն տարբերվում: Երկրորդ՝ այլընտրանքային վարկածի պարագայում ցուցանիշների երկու խմբում առկա է տվյալների փոխկապվածություն:

Համաշխարհային ՀՆԱ-ի մեջ զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր և ուղղակի մասնաբաժնի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող 2006-2018 թթ. ընթացքում զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում տատանվել է տարեկան միջինը 9.9%-ի սահմանում, իսկ ուղղակի մասնաբաժինը՝ 3.1%-ի: 2018 թ. զբոսաշրջության և ճանապարհորդության ընդհանուր մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 10.3%, իսկ ուղղակի մասնաբաժինը՝ 3.2%:

Այս համատեքստում, կարևոր է նաև միջազգային զբոսաշրջային եկամուտների և համաշխարհային ՀՆԱ-ի միջև կոռելյացիոն կապի բացահայտումը: Մինչև ազդեցության գնահատում իրականացնելը լոգարիթմվել են թվային շարքերը՝ նորմավորելու դրանցում առկա հնարավոր տոկոսային տատանումները: Գնահատվել է նաև համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգա-

[12] Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի ու Զբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի տվյալների հիման վրա:

յին զբոսաշրջային եկամուտների միջև կոռելյացիոն կապը (0,9716), ինչը կարելի է գնահատել որպես ուժեղ, դրական կապ:



Գծապատկեր 2. ***Համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների միջև կոռելյացիոն կապը***[13]

Քանի որ համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների միջև առկա է ուժեղ կոռելյացիոն կապ, ուստի հնարավոր է դրանց միջև առկա ռեգրեսիոն կապի գնահատումը: Այս պարագայում, որպես անկախ փոփոխական, հանդես է գալիս համաշխարհային ՀՆԱ-ն, իսկ կախյալ փոփոխական՝ միջազգային զբոսաշրջային եկամուտները: Ռեգրեսիոն վերլուծությամբ գնահատվել է, թե ինչքանով են միջազգային զբոսաշրջային եկամուտները կախված համաշխարհային ՀՆԱ-ից:

Ռեգրեսիոն վերլուծություն իրականացնելու համար նախ անհրաժեշտ է, որ բոլոր շարքերը ստացիոնար լինեն, շարքերի ստացիոնարությունը ստուգվել է Դիքի-Ֆուլեր (Dickey-Fuller) թեստի միջոցով (ստացիոնարություն ասելով նկատի ունենք այն, որ պատահական գործընթացի որոշակի հատկություններ չեն փոփոխվում ժամանակի ընթացքում:): Բոլոր փոփոխականներն առաջին տարբերությամբ ստացիոնար են, ինչը և թույլ է տալիս իրականացնել ռեգրեսիա: Իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն՝ փոքրագույն քառակուսիների եղանակով, Eviews 10 SV ծրագրային փաթեթի կիրառմամբ:

Փիրսոնի կոռելյացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների միջև ուղիղ գծային կապ կա, իսկ կոռելյացիոն գործակիցը կազմում է 0.9716: Դրանից կարելի է ենթադրել, որ կոռելյացիոն վերլուծության մի փոփոխականի գծային փոփոխությունը համապատասխանաբար փոփոխություն է ստեղծում մյուս փոփոխականի մոտ: Մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ R^2=0.944100, ինչից պետք է եզրակացնել, թե առկա տվյալների տատանումները որքանով է հնարավոր բացատրել մոդելով: Այս պարագայում, միջազգային զբոսաշրջային եկամուտների փոփոխությունը 94% դեպքերում բացատրվում է համաշխարհային ՀՆԱ-ով:

[13] Վերլուծության համար հիմք են ծառայել Համաշխարհային բանկի և Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տեղեկատվական շտեմարանները՝ https://data.worldbank.org/indicator/ST.INT.ARVL և https://www.unwto.org/statistics:

Աղյուսակ 1

Համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների միջև ռեգրեսիոն վերլուծություն

Dependent Variable: RECEIPTS
Method: Least Squares
Sample(adjusted): 2006 2017
Included observations: 12 after adjusting endpoints

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	-232.8700	114.0334	-2.042121	0.0684
GDP	21.07666	1.621805	12.99580	0.0000

R-squared	0.944100	Mean dependent var	1236.567
Adjusted R-squared	0.938510	S.D. dependent var	206.6227
S.E. of regression	51.23658	Akaike info criterion	10.86180
Sum squared resid	26251.88	Schwarz criterion	10.94261
Log likelihood	-63.17078	F-statistic	168.8909
Durbin-Watson stat	0.340012	Prob(F-statistic)	0.000000

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսությունը սնուցող կարևոր աղբյուրներից է, որի դերն ու ազդեցությունը ինչպես առանձին երկրների ՀՆԱ-ի, այնպես էլ համաշխարհային ՀՆԱ-ի վրա թերագնահատել չի կարելի: Միլիոնավոր զբոսաշրջիկների ճամփորդությունները և այցելությունները զբոսաշրջային գրավչության վայրեր ուղղակիորեն անդրադառնում են երկրների եկամուտների մակարդակների վրա՝ ակտիվացնելով տնտեսական համայնապատկերը ինչպես տվյալ երկրի, այնպես էլ համաշխարհային տնտեսության համար: Միևնույն ժամանակ, համաշխարհային ՀՆԱ-ի և միջազգային զբոսաշրջային եկամուտների միջև տնտեսաչափական կախվածության բացահայտումը հնարավորություն է տալիս գնահատելու զբոսաշրջային եկամուտների զգայունությունն ու համաշխարհային տնտեսական տատանումներից իրավիճակային անմիջական կախվածությունը:

Այսպիսով, միջազգային զբոսաշրջային շուկան երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հզոր ուժ է, ինչը խթանում է երկրում արտարժույթի ներհոսքը, զբաղվածության մակարդակի աճը, ավելացնում է երկրի բարեկեցության մակարդակն ու զարգացնում միջանձնային հարաբերությունները: Շնորհիվ ուժեղ բազմարկչի էֆեկտի՝ զբոսաշրջությունը հանգեցնում է տարակից տրանսպորտային և կապի ենթակառուցվածքի, գյուղատնտեսության և առևտրի զարգացմանը: Ընդհանուր առմամբ, միջազգային զբոսաշրջության արդյունաբերությունը հանդես է գալիս որպես բավական բարդ համակարգ: Միևնույն ժամանակ, զբոսաշրջության ոլորտի ցուցանիշն անչափ կարևոր է, և դրանով հնարավոր է գնահատել ազգային տնտեսության զարգացման աստիճանը: Զբոսաշրջային արդյունաբերությունը և դրա զարգացումն ապահովում են բնակչության զբաղվածության և եկամուտների ավելացման ընդհանուր տնտեսական խնդիրների լուծումը՝ նպաստելով տնտեսության համապատասխան հատվածների հարաճուն զարգացմանը:

Առանձին երկրի տնտեսության վրա զբոսաշրջության ոլորտի ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսի փոխկապվածություններ են առկա զբոսաշրջության ոլորտը նկարագրող ցուցա-

նիշների և երկրի տնտեսական աճի, զբաղվածության, եկամուտների ու հարկերի միջև:



Գծապատկեր 3. ***Ծառայությունների տեսակի մեջ զբոսաշրջային գործակալությունների գործունեություն (L_tourism_serive) և միջին ամսական անվանական աշխատավարձ (LWAGE), 2001-2018 թթ.***[14]

Հիմնվելով առկա ուսումնասիրությունների ու վերլուծությունների վրա՝ հեղինակն իրականացրել է հետազոտություն՝ պարզելու համար, թե հայաստանյան ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեությունն ինչպես է անդրադառնում երկրի միջին ամսական անվանական աշխատավարձի վրա, ինչը հնարավորություն կտա գնահատելու և հասկանալու երկրի բնակչության եկամուտների ավելացման հարցում զբոսաշրջության կարևորությունն ու նշանակությունը: Մինչև ազդեցության գնահատում իրականացնելը լոգարիթմվել են թվային շարքերը՝ նորմավորելու համար դրանցում առկա հնարավոր տոկոսային տատանումները:

Աղյուսակ 2

Դիքի-Ֆուլեր (Dickey-Fuller) ընդլայնված վիճակագրական թեստ

Զրոյական հիպոթեզ՝ փոփոխականն ունի միավոր արմատ Արտածին փոփոխականները հաստատուն են		
	S-վիճ	հավ.
Միջին ամսական անվանական աշխատավարձ	-3.675	0.0028
Ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեություն	-0.944279	0.3622

Ռեգրեսիոն վերլուծություն իրականացնելու համար նախ անհրաժեշտ է, որ բոլոր շարքերը ստացիոնար լինեն, շարքերի ստացիոնարությունը ստուգվել է Դիքի-Ֆուլեր թեստի միջոցով: Բոլոր փոփոխականներն առաջին տարբերությամբ ստացիոնար են, ինչը և թույլ է տալիս իրականացնել ռեգրեսիա:

Ռեգրեսիոն վերլուծություն է իրականացվել փոքրագույն քառակուսիների եղանակով, Eviews 10 SV ծրագրային փաթեթի կիրառմամբ: Որպես կախյալ փոփոխական դիտարկվել է ծառայությունների ոլորտում զբոսաշրջային

[14] Վերլուծության համար հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարանները՝ https://www.armstat.am/am/ :

գործակալությունների գործունեությունը, իսկ անկախ փոփոխական՝ միջին ամսական անվանական աշխատավարձը:

Աղյուսակ 3

Ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեության և միջին ամսական անվանական աշխատավարձի միջև ռեգրեսիոն մոդելի նկարագիրը

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	-1.471644	3.599871	-0.408805	0.6881
LWAGE	2.066970	0.316622	6.528190	0.0000
R-squared	0.727043	Mean dependent var		21.99172
Adjusted R-squared	0.709983	S.D. dependent var		1.596731
S.E. of regression	0.859891	Akaike info criterion		2.640417
Sum squared resid	11.83061	Schwarz criterion		2.739348
Log likelihood	-21.76376	F-statistic		42.61727
Durbin-Watson stat	1.881686	Prob(F-statistic)		0.000007

Ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեության և միջին ամսական անվանական աշխատավարձի միջև Փիրսոնի կոռելյացիոն վերլուծության համաձայն՝ գնահատվել է ուժեղ գծային կապ՝ 0.79 կոռելյացիոն գործակցով: R^2 ցուցանիշը ստացվել է 0.727043, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ առկա տվյալների տատանումները բավականաչափ լավ են բացատրվում մոդելով, իսկ մոդելով չի բացատրվում տվյալների տատանումների ընդամենը 28%-ը:

Զբոսաշրջային ծառայություններն ուղղակիորեն անդրադառնում են երկրի ընդհանուր տնտեսական զարգացման, ինչպես նաև բնակչության բարեկեցության մակարդակի աճի վրա: Այս համատեքստում, առանցքային է տնտեսամաթեմատիկական գնահատականը՝ հասկանալու համար, թե Հայաստանում զբոսաշրջային գործակալությունների գործունեության ակտիվացումն ինչպես է անդրադառնում միջին ամսական անվանական աշխատավարձի վրա, որը երկրի բնակչության բարեկեցության աստիճանը հստակեցնող կարևոր ցուցիչ է:

Միևնույն ժամանակ, Հայաստանում զբաղվածների թվի և ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեության, երկրի տնտեսական աճի ու միջազգային զբոսաշրջային ժամանումների միջև փոխկապվածությունների բացահայտման նպատակով հեղինակի կողմից հաշվարկվել է Փիրսոնի կոռելյացիոն վերլուծություն, որի համաձայն՝ ստացվել է նշված ցուցանիշների միջև թույլ բացասական կապ: Ինչպես և կարելի էր ենթադրել, դրական և բավական ուժեղ կոռելյացիոն փոխկապվածություն է առկա միջազգային զբոսաշրջային ժամանումների և ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեության միջև (0.87):



Գծապատկեր 4. ***Ծառայությունների ոլորտում զբոսաշրջային գործակալությունների գործունեության և միջին ամսական անվանական աշխատավարձի միջև ռեգրեսիոն մոդել***

Եզրակացություն: Զբոսաշրջության ամենամեծ առավելությունը երկրի տնտեսության մեջ փողի ներհոսքի ապահովումն է, ինչը հատկապես էական է զարգացող տնտեսություններ ունեցող երկրների համար: Բացի դրանից, զբոսաշրջությունը տնտեսությանը բազմազանեցված (դիվերսիֆիկացված) զարգացման հնարավորություններ է տալիս, խթանում է երկրում զբաղվածության աճը և, իհարկե, ուղղակիորեն անդրադառնում է տեղական ենթակառուցվածքների բարելավման վրա: Զբոսաշրջությունը նաև խթանում է ձեռնարկատիրությունը, մշակութային ժառանգության պահպանումը: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ հատկապես փոքր և զարգացող երկրների տնտեսությունների համար զբոսաշրջությունը զարգացման իրական հնարավորություն է, որի ամբողջ ներուժն անհրաժեշտ է օգտագործել:

Այսպիսով, միանգամայն հստակ կարող ենք արձանագրել, որ զբոսաշրջության սոցիալ-տնտեսական ազդեցությունն ու նշանակությունը մեծ են երկրի ընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացման տեսանկյունից: Հայաստանը, պայմանավորված աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով ու պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, ունի բազմաճյուղ զբոսաշրջային արդյունքի զարգացման մրցունակ ներուժ: Բացի դրանից, ազգային խոհանոցն ու ազգի հյուրասեր նկարագիրը ևս ոչ ֆորմալ գործոններ են, որոնք կարող են խթան դառնալ զբոսաշրջային արդյունաբերության զարգացման համար: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց տվեց վերլուծությունը, զբոսաշրջության տնտեսական նշանակությունը մեր երկրի համար դեռևս բավարար չէ: Իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ Հայաստանը սոցիալ-տնտեսական բավական լուրջ մարտահրավերների առջև է՝ արտագաղթ, գործազրկության ու աղքատության բարձր մակարդակ, եկամուտների անհավասարաչափ բաշխվածություն, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երկրի ընդհանուր տնտեսական զարգացման վրա: Այդուհանդերձ, զբոսաշրջային ոլորտը միանգամայն «բուժող» նշանակություն կարող է ունենալ երկրի սոցիալ-տնտեսական միջավայրի «առողջացման» գործում:

Օգտագործված գրականություն

1. Քթոյան Ա., Խաչիկյան Ս., Մովսիսյան Մ., Հակոբյան Կ., Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փաթեթի գործադրմամբ, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ, 2015, https://asue.am/upload/files/structure/SPSS_methodical_PDF.pdf:
2. Коковский Г.И., Обеспечение конкурентоспособности туриндустрии России на международном рынке туристских услуг, Санкт-Петербург, 2010.
3. Ahiawodzi A.K., Tourism Earnings and Economic Growth in Ghana, British Journal of Economics, Finance and Management Sciences, Vol. 7 (2), 2013.
4. Anson K.J., Thaliath, A., A Study on Changes in GDP due to its Relative Dependence on Tourism Receipts, Atna, J Tour Stud, 11, 1, 2016.
5. Cooper C., Fletcher J., Fyall A., Gilbert D., Wanhill S., Tourism Principles and Practice: (4th Edition). Harlow: Financial Times Prentice Hall, 2008.
6. De Mello-Sampayo F., De Sousa-Vale S., Tourism and Growth in European Countries: An Application of Likelihood-Based Panel Cointegration, Working Papers 17, 2012.
7. Eugenio-Martin J. L., Martin Morales N., Scarpa R., Tourism and Economic Growth in Latin American countries: A Panel Data Approach, Social Science Research Network Electronic Paper. No. 26, 2004.
8. Jago L., The Value of Business Events, 2012, www.businesseventssydney.com.au.
9. International Tourism highlights, UNWTO, 2019 Edition.
10. Kreishan F. M.M., Tourism and economic growth: The Case of Jordan, European Journal of Social Sciences, 15 (2), 2010.
11. Kumar J., Hussain K., A Review of Assessing the Economic Impact of Business Tourism: Issues and Approaches. International Journal of Hospitality and Tourism Systems, 7(2),2014, ISSN: 0947-6250 Print.
12. Stynes D. J., Economic Impacts of Tourism: A Handbook for Tourism Professionals, Illinois Bureau of Tourism, Illinois Department of Commerce and Community Affairs, Prepared by the Tourism Research Laboratory at the University of Illinois at Urbana-Champaign, 1997.
13. https://data.worldbank.org
14. https://www.unwto.org
15. https://www.armstat.am/am/

ШОГИК МЕДЖЛУМЯН
Аспирант факультета экономики и менеджмента ЕГУ

Экономико-математическая оценка влияния международного туризма на мировую экономику.– В целом туризм можно рассматривать как одно из наиболее эффективных проявлений услуг международной торговли, наряду с финансовыми и банковскими услугами. Это важный экономический и социальный фактор, который генерирует инвестиции, рабочие места и доходы, развивая инфраструктуру страны и способствуя сохранению национальных ценностей. Потенциал международного туризма в мировой экономике обусловлен довольно большим весом совокупной и прямой доли туристических услуг в мировом ВВП. В этом контексте основной целью статьи является оценка влияния туристического сектора на общие тенденции развития мировой экономики. Автор оценивает существующие взаимосвязи доходов международного туризма и мирового экономического роста.

Ряд исследований демонстрируют потенциальное социально-экономическое значение туристического сектора с точки зрения экономического роста, роста доходов и общей конкурентоспособности. В этом контексте для Армении крайне важно оценить и понять с помощью эконометриического анализа, как сектор туризма влияет на среднемесячную номинальную заработную плату в стране.

Ключевые слова: *международный туризм, мировая экономика, корреляционный анализ, регрессионный анализ, эконометрический анализ, деятельность туристических агентств, среднемесячная номинальная заработная плата.*
JEL: L83, C20

SHOGHIK MEJLUMYAN
PhD Student at the Department of Economics and Management at YSU

Economic-mathematical Assessment of the Impact of International Tourism on the World Economy.– Tourism can be considered as one of the most effective demonstrations of international trade services, together with financial and banking services. It is an important economic and social factor that brings investments, employment and income while developing the country's infrastructure and preserving national values. The importance of international tourism in the world economy relates to a quite large share of the total and direct share of tourism services in the world GDP. In this context, the main purpose of the paper is to assess how the tourism sector influences the

general trends of world economic development. The correlations between international tourism revenues and global economic growth have been assessed by the author.

Several studies demonstrate the potential socio-economic importance of the tourism sector in terms of a country's economic growth, revenue growth, and overall competitiveness. In this context, it is essential for Armenia to assess and understand through econometric analysis how the tourism sector affects the country's average monthly nominal salary.

Key words: *international tourism, world economy, correlation analysis, regression analysis, econometric analysis, activities of travel agencies, average monthly nominal salary.*
JEL: L83, C20